

3889

ՀՈՒ ԱԻԴ

ԲԻBLIOTeka  
ИНСТИТУТА  
ВОДОГОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

10 ՈՐ, ՎՈՐ ՑՆՑԵՑԻՆ  
ԱՃԽԱՐՅԸ



ԱՓօնութեան ՏԱՄԱԱՑԱԿԻ ՏՈՆԱԿԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱ-  
ՊՈՈՐ ԱԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՇ ԿԱԶՄՎԱԾ ԱՆԴՐԿ-  
Շ. ԽՈՐՃՐԴ. ՀԱՆՐ. ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻՆ ԿԻՑ

9(47) #19/7

12-42

24 JAN 2006

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОЗДОХОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

Հայաստան  
9(47) ս/1917  
Բ-42

ՀՈՆ ՌԻԴ

10 ՈՐ, ՎՈՐ ՑԱՅԵՑԻՆ ԱՅԻՆԱՐՀԸ

ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԵՑԻ հ. ՎՈՐՈԲՅԱՆ

ԱՌՈՒՍԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ՝ Ֆ.Լ. ԴԱՍՏԱԿՅԱՆ


1467



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՈԶԴՈԽՈՎԵԴՈՒԹՅՈՒՆ «ԶԱԿԿԱՆԻԳԱ»  
Թիվը՝ 1928

24.07.2015

3889



Թիֆլիս, ժ. Տ.Գ.Խ. Պոլիգրաֆտրեստի 4-րդ տպ., Պուշկին փող. № 3  
Գրառադաշտ, № 1698. Տիքամ 2000.

Հենց վոր հայտնի յեղավ, թե մեզ մոտ 1917 թվականի փետրվարին տեղի յե ունեցել հեղափոխություն, վոր տապալել ե ցարին, ամերիկացին հեղափոխական և գրող Զոն Ռիգը անհապաղ մեկնեց Ռուսաստան:

Բոնկեց Հոկտեմբերյան հեղափոխությունը: Զոն Ռիգն ուշադիր, որը որին հետևում եր այն տմենին, վոր այդ ժամանակ տեղի յեր ունենում Պետրոգրադում, Մոսկվայում և գավառում:

Հետեւում եր նա ամեն ինչի վնչ թե թերթիրի և շրջապատզների պատմածներով, այլ աշխատում եր լինել թե փողոցներում, թե կարմիր գվարդիական վաշտերի շարքում, թե Հոկտեմբերյան հեղափոխության դլասվոր շտաբում «Ամոլինում»:

Իր բոլոր զիանգությունները նա զրի առավ, իսկ յերբ իմացավ, վոր ամբողջ աշխարհում, ու իր հայրենիքում՝ Ամերիկայում ևս բանվորների իշխանության դեմ կատաղի հարձակում են գործում, վորոշեց զրել մի գիրք, վորը ստարյերկրյան բանվորներին ճիշտ կերպով պատմեր տեղի

ունեցած բանվորա-գյուղացիական հեղափոխության մասին:

Զո՞ն Ռիդը գնաց Ամերիկա և այնտեղ մեր ամբողջ զիրք գրեց մեր հեղափոխության մասին:

Բուրժուազիան նախազգաց, վոր այդ գրքի մեջ կբացվի այն սուսար, վորով նա ուզում երխաբել ամերիկյան բանվորներին:

Բուրժուական սմբախը վեց անգամ խուժեց այն սենյակը, վորուել աշխատում եր Ռիդը, վորոնելով ձեռագիրը, վորակեսվի թույլ չտա մերկացնելու իրեն, սակայն Ռիդը տյուտամենայնիվ հաջողեց զրել ու տպագրել զիրքը:

Ընկեր Լենինը կարգալով այդ զիրքը, զրեց. « . . . Յես սմբողջ հոգով հանձնարարում եմ այդ զրվածքը բոլոր յերկրների բանվորներին: Յես կցանկանայի տեսնել այդ զիրքը առարածված միլիոնավոր որբնակներով և թարգմանված բոլոր լեզուներով, վորովհետեւ նա ճիշգրիտ և անսովոր աշխատյժով շարահույսում և այն բոլոր անցքերը, վոր այսքան կարևոր են հասկանալու համար, թե ինչ ե պրոլետարական հեղափոխությունը, ինչ ե պրոլետարիատի գերիշանությունը»:

Լիներով հեղափոխական և մարտիկ՝ հանուն բանվորների և գյուղացիների գործի, Զո՞ն Ռիդը իր հայրենիքում բանվորներին կազմակերպում եր-

կոմմունիստական կուսակցության շուրջ և վերջինիս պատրաստում պայքարի՝ նվաճելու իշխանությունը Ամերիկայի աշխատավորների համար: Իբրև այդ կուսակցության պատվիրակ, նա 1920 թվ. կրկին Ռուսաստան յեկայներկա գանվելու կոմմունիստական խաներնացիոնալի համշխարհային համագումարին: Յերբ ավարակեցին համագումարի աշխատանքները, նա մեկնեց շրջելու Ռուսաստանը, վորպեսզի անձամբ դիսի, թե ինչպես են բանվորներն ու գյուղացիները աշխատում իրենց յերկրի վերածնության գործի համար: Ճանալուրին նա վարակվեց բծավոր տիֆով ու մեռավ: Կարմիր Մոսկվան հանդիսավոր կերպով թաղեց նրան կրեմի պատերի մոտ, ժողովուրդների խաղաղության ու յեղբայրության համար ընկած մարտիկների գերեզմանաշարքում, այն մարտիկների, վորոնց յերգել ե Ռիդը իր զրքում «Տաս որ, վոր ցնցեցին աշխարհը»:

Գյուղի բնակչին միշտ չի հաջողվի գնել ու կարգալ այդ զեղեցիկ զիրքը: Ռւստի և «Կрасная Новь»-ի հրատարակչությունը վորոշեց լույս ընծայել նրա համառոտ փոխադրությունը, վոր նկարազրում ե Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հերոսական կոիկը հանուն Խորհուրդների, հանուն կոմմունիզմի:

## ՊԱՅՄԱՆԵՐԸ

Բանվորների, զինվորների և գյուղացիների շարքերում կը այն հաստատ համոզումը, թե հեղափոխությունը, վոր տապալեց ցարին, չի վերջացել:

Նրանք պահանջում եյին «խաղաղություն, հող և բանվորական վերահսկողություն արտադրության վերաբերմամբ»:

Մենցեկիներին և ես-երներին այդ գյուր չեր գալիս, այդ պահանջներին նրանք տալիս եյին խուսափողական պատասխան. «սպասեցնք հիմնադիր ժողովին»:

Մասսան զբանով չեր բավարպում։  
Մինչ այդ՝ զինվորներն սկսեցին խաղաղության հարցը լուծել դասալքությամբ։ Գյուղացիները կրակ եյին տալիս կալվածատիրական հողերը, իսկ բանվորները գործադուլ եյին անում և թողնում աշխատանքը։

Ժամանակավոր կտուավարությունը տառանշվում եր. մերթ հանգստացնելու նպատակով անց եր կացնում վոչինչ չարժեցող թղթի վրա գրված որենքը, մերթ զորաճակատում մացնում ձերբակալություններ և մահապատիժ հեղափոխություն քարոզողների դեմ:

Կերենսակին, մենչեիկները և ես-երները, կապիտալիստների ու կալվածատերերի հետ միասին, ստեղծեցին խառն մինիստրություն: Բոլշևիկները դուրս յեկան նրա դեմ և սկսեցին մերկացնել այդ կառավարության մեջ մտած կեղծ-սոցիալիստ մինիստրներին:

Ահա մի հոդված բոլշևիկյան «Рабочий Путь» թերթից՝ «Սոցիալիստ-մինիստրներ» վեռնադրով:

«Վերցրեք նրանց ցուցակ ծառայությանը, — ասվում է հոդվածում.

«Ծերելիին զինաթափ տրավ բանվորներին, գեներալ Պոլովցեվի հետ միասին «խաղաղացրեց» հեղափոխական զինվորներին և խրախուսեց զինվորների մահապատիժը:

Սկսելելի սկսեց կապիտալիստներից ոզուտի հարյուր տոկոսը խլելու խոստումով և վերջացրեց բանվորների ֆաքրիկային-զործարանային կոմիտեները ցրելու փորձով:

Ավկսենյանը բանավ մի քանի հար-

յուր գյուղացիների, հողային կոմիտեների անգամներին, փակեց մի քանի տասնյակ բանվորական և զինվորական թերթեր:

Սավոյնինովը անմիջական դաշն կապեց գեներալ Կորնիլովի. հետ և չհանձնեց Պետրողրադն այդ «ազատարարին»՝ իրենից անկախ հանգամանքների շնորհիվ միայն:

Զարուդնիին Սլեքսինսկու և Կերենսակու հետ միասին բանավ հազարավոր հեղափոխական բանվորների, նավաստիների և զինվորների:

Կերենսակին... բայց սրա մասին ավելի լավ ե լսենք: Նրա ցուցակ ծառայությանը չափազանց յերկար ե»:

Նավաստիները վորոշումներ եյին հանում՝ պահանջելով «անհապաղ հեռացնել ժամանակավորության շարքերից բախտախնդիր Կերենսակուն, վորպես մի մարդու, վորը՝ յուր անամոթ քաղաքական ստով հոգուտ բուրժուազիայի՝ խայտառակում և կործանում է մեծ հեղափոխությունը»:

Աշխատավոր մասսաների շարքերում համակրությունը բոլշևիկների վերաբերմամբ աճում էր վոչ թե որերով, այլ ժամերով:

Ցեմենտ հուլիսին բոլշևիկների յետեկցն եյին ընկել նրանց վորսալու և արհամարհում եյին նրանց, ապա սեպտեմբերին բանվորները, նա-

վաստիները և զինվորները մասսաներով անցնում եյին բոլշևիկների կողմը:

Աշխատավորների համակրանքը մենշևիկների և ես-երների վերաբերմամբ արագ կերպով հալչում եր. Մոսկվայի և Պետրոգրադի քաղաքային դռումաների ընտրություններին աշխատավորներն իրենց պատղամավորներն ընտրում եյին բոլշևիկներից:

Յեթե սկզբում քաղաքային վարչությունների մեջ յուրաքանչյուր հարյուր ներկայացուցից 70-ը մենչեւկ և ես-եր եյին, ապա սեպտեմբերյան վերընտրություններից հետո նրանց թիվը 18-ից չեր անցնում. այդ ցույց եր տալիս, վոր բանվորները, նավասահները և զինվորները յերես եյին դարձել նրանցից:

Խորհուրդների կենտրոնական Գործադիր Կոմիտեն, վոր ընտրված եր ամառվա ընթացքում, կազմված եր բոլշևիկների հակառակորդներից՝ մենշևիկներից և ես-երներից:

Վերընտրությունները պետք ե տեղի ունենային սեպտեմբերին. Նոր կենտրոնական Գործադիր Կոմիտեն, անկասկած, պետք ե դառնար բոլշևիկական, վորովհետեւ ամբողջ յերկրում խորհուրդների համար մեծ մասամբ ընտրում եյին բոլշևիկներին:

Գյուղացիական խորհուրդներում բոլշևիկ-

ներն ավելի քիչ եյին, բայց նույնիսկ այսաւեղ սկսեց զարգանալ բոլշևիկյան թեր:

Հենց այդ նույն ժամանակ հականեղափոխականներն սկսեցին գլուխ բարձրացնել: Պետրոգրադի Տրոյցիկի թատրոնում «Ճարի հանցանքները» վերնագրով կոմեդիայի խաղի միջոցին միապետականներն սկանդալ սարքեցին և փորձ եյին անում ծեծել դերասաններին՝ կայսրին հասցրած վիրափորձնքի համար:

Բուրժուազիան և ինտելլիգենցիան Բանվորական Պատգամավորների Խորհուրդն անվանում եյին վոր կերպ, քան յեթե «Հների պատգամավորների խորհուրդ»:

Հոկտեմբերի 15-ին յես խոսում եյի ուռա միլիոնատեր Սահման Գեորգիեվիչ Լիանողովի հետ, վորը կազետ եր իր համոզմունքներով:

«Հեղափոխությունը, — տասց նա, — դա մի հիվանդություն ե: Ոտարերկրյա պետությունները միջամտում են մեր գործերին ճիշտ այնպես, ինչպես բժիշկներն են միջամտում, վոր բժշկեն հիվանդ յերեխային և նրան քայլել սովորեցնեն: Նրանք պետք ե պաշտպանեն իրենց յերկրներն այնպիսի՝ վարակիչ զաղափարների վտանգից, վորպիսիք են պրոլետարական գերիշխանությունը և համաշխարհային սոցիալական հեղափոխությունը: Բոլշևիկների հետ պետք ե

վաստիները և զինվորները մասսաներով անց-  
նում եյին բոլշևիկների կողմը:

Աշխատավորների համակրանքը մենչեվիկնե-  
րի և ես-երների վերաբերմամբ արագ կերպով  
հալչում եր. Մոսկվայի և Պետրոգրադի քաղա-  
քային դռումաների ընտրություններին աշխա-  
տավորներն իրենց պատղամավորներն ընտրում  
եյին բոլշևիկներից:

Ցեթե սկզբում քաղաքային վարչությունն-  
երի մեջ յուրաքանչյուր հարյուր ներկայա-  
ցուցչից 70-ը մենշևիկ և ես-եր եյին, ապա  
սեպտեմբերյան վերընտրություններից հետո  
նրանց թիվը 18-ից չեր անցնում. այդ ցույց  
եր տալիս, վոր բանվորները, նավաստիները և  
զինվորները յերես եյին գարձել նրանցից:

Խորհուրդների կենտրոնական Գործադիր  
Կոմիտեն, վոր ընտրված եր ամառավա ընթայ-  
քում, կազմված եր բոլշևիկների հակառակորդ-  
ներից՝ մենշևիկներից և ես-երներից:

Վերընտրությունները պետք ե տեղի ու-  
նենային սեպտեմբերին. նոր կենտրոնական  
Գործադիր Կոմիտեն, անկասկած, պետք ե  
դառնար բոլշևիկական, վորովհետեւ ամբողջ յերկ-  
րում խորհուրդների համար մեծ մասամբ ընտ-  
րում եյին բոլշևիկներին:

Գյուղացիական խորհուրդներում բոլշևիկ-

ներն ավելի քիչ եյին, բայց նույնիսկ այստեղ  
սկսեց զարգանալ բոլշևիկյան թեր.

Հենց այդ նույն ժամանակ հականեղափո-  
խականներն սկսեցին գլուխ բարձրացնել: Պետ-  
րոդրագի Տրոյցիկի թատրոնում «Յարի հան-  
ցանքները» վերնագրով կոմեդիայի խաղի միջո-  
ցին միապետականներն սկանդալ սարքեցին և  
փորձ եյին անում ծեծել դերասաններին՝ կայս-  
րին հացըրած վիրավորանքի համար:

Բուրժուազիան և ինտելիգենցիան Բանվո-  
րական Պատգամավորների Խորհուրդն անվա-  
նում եյին վոչ այլ կերպ, քան յեթե «Հների  
պատգամավորների խորհուրդ»:

Հոկտեմբերի 15-ին յես խոսում եյի ոռուս  
միլիոնատեր Սաեպան Գեորգիեվիչ Լիանոզովի  
հետ, վորը կաղետ եր իր համոզմունքներով:

«Հեղափոխությունը,—ասաց նա, —դա մեր  
հիվանդություն եւ: Ոտարերկրյա պետություն-  
ները միջամտում են մեր գործերին ճիշտ այն-  
պես, ինչպես բժիշկներն են միջամտում, վոր  
բժշկեն հիվանդ յերեխային և նրան քայլել սո-  
վորեցնեն: Նրանք պետք ե պաշտպանեն իրենց  
յերկրներն այնպիսի վարակիչ գաղափարների  
վասնգից, վորակիսիք են պրոլետարական գերիշ-  
խանությունը և համաշխարհային սոցիալական  
հեղափոխությունը: Բոլշևիկների հետ պետք ե

հաշիվը մաքրել հետեւյով ձեռվ, կառավարությունը պիտի աեղափոխել Պետրոգրադից Մոսկվա, Պետրոգրադը հայտարարել պաշտպահական գրության մեջ, և զորահրամանաւարձ հաշիվ կտեսնի բոլշևիկների հետ ռազմական ձեռվ։ Իսկ յեթե Հիմնադիր ժողովը կյանքում իրագործի սոցիալիստական որենքներ, ապա և՛ այն կարելի կլինի ցըել զենքի ուժով։»

Վրա հասավ ոռւսական սոոկալի ձմեռը։ Յեսլյում եյի առևարա-արդյունագործական աշխարհի ներկայացուցիչներից։ «գուցե այժմ ձմեռը մեզ ազատի հեղափոխությունից։»

Ռիգան հանձնվեց անմիջապես հենց այն դեպքից հետո, յերբ գեներալ Կորնիլովը համայն ժողովրդի առաջ հայտարարեց։ «Ալեքաք ե արդյոք զոհարելենք Ռիգան—յէրկիրը յուր պարտքի գիտակցությանը բերելու գնով։» Հուսահատված ժողովրդական մասսաներն ազաղակում եյին, թե բուրժուազիան գալաճանում և ժողովրդին։ Կադետական կուսակցության Պետրոգրադի կոմիտեյի քարտուղարը և դաշնակից դիվանագետներից մեկը ինձ ասացին, թե յէրկիրն ավերում են դիտավորյալ կերպով՝ հեղափոխությունը խայտառակելու համար։

Յես զիսեմ, վոր Խար'կովի մոտ գտնվող հանքահորերը զիտավորյալ կերպով վողողվում

եյին ջրով, Մոսկվայում ինմեններները ֆարբի-կաներում փչացնում եյին մեքենաները, յերկաթուղային պաշտոնյաները բռնվեցին հենց այն միջոցին, յերբ փչացնում եյին շողեմեքենաները։

Բուրժուազիայի մեծ մասը Վիլհելմի դալուստը գերադասում եր բոլշևիկներից։

Թանգությունը սարսափելի յեր։ Սպեկուլյանաներն ահազին կարողություն եյին դիզում, կաշառում եյին պաշտոնյաներին, քեփեր սարքում։ Դավաճանության և կաշառքների միջից ավելի պարզ սկսեց հնչել բոլշևիկների ձայնը։ «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին, հռո, հաց, կորչի պատերազմը, կորչի գաղանի դիվանագիտությունը։»

Պայքարը բանվորների և բուրժուազիայի միջև սեպակեմբերի մոտերքը հասավ իր գագաթնակետին։

Ճակաառում զինվորները կտիվ եյին մզում իրենց սպաների գեմ և վարժվում ինքնավարության իրենց կոմիտեներում։ Ֆաբրիկաներում Փաբրիկային-դործարանային կոմիտեները փորձառություն և ույժ եյին ձեռք բերում ու ըսկըսում պարզ պատկերացնել իրենց պատմական գերը հին կարգերի գեմ մզվող պայքարի մեջ։

Ամենուրեք տաք վեճեր եյին տեղի ունենում... կրկեսներում, դպրոցներում, զորանոցնե-

բում: Տեղի եյին ունենում միտինգներ ռազմաճակատում՝ խրամատներում, գյուղական մարդագետիններում, ձեռնարկություններում:

Վողջ Ռուսաստանը սովորում եր կարգալ հկարդում եր քաղաքական, տնտեսական ու պատմական գրքեր, վորովճետեւ մարդիկ ուզում եյին խմանալ, թե ինչ է կատարվում արդյոք:

Յերբ մենք գնացինք ճակատ՝ XII-րդ բանակը, վոր դանշում եր Ռիգայից այն կողմը, հյուծված, բորիկ, հիվանդ զինվորները մեզ հարց ավին. «բերել եք կարդալու վորեւ բան»:

Բայց չնայած այդ բոլորին, հնի մնացորդները շատ եյին: Պաշտոնյաները առաջվա պես ձգտում եյին պահպանել իրենց աստիճաններն ու յերազում եյին ավելի բարձր աստիճանի մասին: Իսկ Ռենատում առաջվա պես սենատորներից պահանջում եյին ներկայանալ ցարական սպասավորի համար նշանակված համագգեստով:

Ահա Ռուսաստանի պատկերը, վոր նախորդում եր լայն մասսաների ապասամբությանը:

## ՓԱ. 2

### ԳԱԼԻՔ ՓՈԹՈՐԻԿԸ

Սեպտեմբերին գեներալ Կորնիլովը արշավանքի ձեռնարկեց Պետրոգրադի վրա: Կորնիլովյան դավադրության մեջ խառն եր Սավինկովի և Կերենսկու մատը: Սակայն Կորնիլովին ձերբակալեցին զինվորները, քշեցին մի շարք գեներալների, մինիսարներից մի քանիսը հրաժարական տվին, և ժամանակավոր կառավարությունը քայլայվեց:

Կերենսկին փորձ արավ նոր կառավարություն կազմել կագետների հետ մեկտեղ: Սակայն ժողովրդի արամագրությունը դեմ եր դրան: Կորնիլովի սպառնալիքը ժամանակավորապես իրարմոտեցրեց բոլոր սոցիալիստական կուսակցություններին: Ամենքը պահանջում եյին մի այնպիսի կառավարություն, վորը պաշտպաներ հեղափոխությունը: Բայց յերբ կորնիլովյան անհաջող արշավանքից հետո բոլշևիկները մեծամասնություն կազմեցին Պետրոգրադի, Մոսկվայի,

Կիհի, Ողեսսայի և մյուս քաղաքների Խորհուրդներում, մենչեվկներն ու ես-երները նորից թեքվեցին բուրժուազիայի կողմը: Լենինից նրանք ավելի ելին վախճնում, քան թե Կորնիլովից: Նոր կառավարություն կազմելու նպատակով մենշեվիկներն ու ես-երները, վորոնք մեծամասնություն եյին կազմում Խորհուրդների կենտրոնական Գործադիր Կոմիտեյում, գեմոկրատական կոնֆերենցիան հրավիրեցին: Այդ կոնֆերենցիայում ձայների մեծամասնությունը նրանք տվին իրենց կազմակերպություններին և աննշան ձայն բոլշևիկներին: Բոլշևիկները պահանջում եյին հրավիրել Խորհուրդների Համառուսական համագումար: Մենշևիկյան հին կենտրոնական Գործադիր Կոմիտեն հրաժարվում եր, հայտարարելով, թե Խորհուրդների գործը հասնում է իր վախճանին և թե՝ կարելի յե Խորհուրդներն արձակել:

Դեմոկրատական կոնֆերենցիայից հետո ստեղծված նոր կառավարությունը, վորի մեջ մտնում եյին նաև կադետները, իր ծրագրի մեջ մայրեց «անսպատասխանատու կազմակերպությունների», այսինքն՝ Խորհուրդների արձակումը:

Բոլշևիկներն այդ առթիվ կոչ արին Խորհուրդներին՝ հավաքվել Պետերբուրգ նոր տոմարով նոյեմբերի 2-ին, վորավեսղի իրենց ձեռքն

առնեն իշխանությունը: Միենույն ժամանակ բոլշևիկները հեռացան Ռուսական Հանրապետության Ժամանակավոր Խորհրդից, վորը կազմակերպված եր գեմոկրատական կոնֆերենցիայում: Բոլշևիկները հայտարարեցին ընդ սմին, թե իրենք չեն ուղում մասնակցել այն կառավարությանը, վոր գավաճանել ե ժողովրդին:

Կադետները հայտարարում եյին, թե կառավարությունը որինական իրավունք չունի Ռուսաստանը հանրապետություն հայտարարելու: Նրանք պահանջում եյին ուղղմանակատի և նավատորմի վերաբերմամբ ձեռք տանել խիստ միջոցներ, նպատակ ունենալով վոչնչացնել այնտեղ յեղած կոմիտեները, և հարձակում գործեցին Խորհուրդների վրա:

Զախ ես-երների կուսակցությունը և մենշևիկներն առաջին առաջարկությունը միացան բոլշևիկներին և պահանջում եյին անհաղաղ հաշտություն կնքել, հողը հանձնել դյուղացիներին և բանվորական վերահսկողություն նշանակել Փարիկաներում:

1917 թվականի նոյեմբերի 10-ին պետք ե տեղի ունենար գաշնակիցների խոստացած կոնֆերենցիան, վորը պիտի քններ պատերազմի նպատակները:

Ժամանակավոր կառավարությունը կոնֆե-



բենցիային ներկայացուցիչ ուղարկեց հին ուժիմի գեներալ Ալեքսեևին և արտաքին զործոց մինիստր կապիտալիստ Տերեշչենկոյին։ Խորհուրդներն ուղարկեցին Սկոբելևին՝ տալով նրան հրահանգ հաշտության մասին։ Ժամանակավոր կառավարությունն ամեն կերպ հակառակում եր դրան, չեր համաձայնում ուղարկել Սկոբելևին և առարկում եր հրահանգի դեմ։ Ռտարերկրյա պետությունները հանդես յեկան Խորհուրդների դեմ, և անգլիական մինիստր Բոնար Լոուն հայտարարեց. «Վորքան յես տեղյակ եմ, կոնֆերենցիան պետք ե քննի վոչ թե պատերազմի նպատակները, այլ միայն պատերազմ մղելու միջոցներն ու ձեռքը»։

Բոլշևիկներն այստեղից ել համապատասխան յեղրակացություն հանեցին. «տեսեք, թե ուր ե ասնում ձեզ մենշևիկների և ես-երների համաձայնողական աշխատանքը»։

Թագմաճակատից մարտաքաղաք գնացին զինվորների կողմից ուղարկված հարյուրավոր պատվիրակներ՝ հաշտություն՝ պահանջելու։

Յես յեկա «Մոդերն» կոչված կրկեսը, ուր տեղի յեր ունենում միտինգ։ Խոսում եր 548-րդ դիվիզիայի մի զինվոր։

«Պարզեցեք, թե հանուն ի՞նչ բանի յեմ պատերազմում յես.. հանուն կոստանդնուպոլիսի, թե

հանուն ազատ Ռուսաստանի։ Յեթե դուք ինձ կապացուցեք, վոր յես պաշտպանում եմ հեղափոխությունը, ապա կգնամ և կկովեմ՝ առանց վախճանալու մահապատժի սպառնալիքից»։

Ութերորդ բանակի ներկայացուցիչն առում եր.

«Մենք թույլ ենք, դուք պետք ե մեզ հասցնեք սնունդ, վոտնաման, և ոգնություն, այլապես՝ խրամանները կմնան դատարկ։ Հաշտություն, կամ հայթայթուն»։

Միքիրական 47-րդ հրեանային բրիգադայի պատվիրակն ասում եր.

«Մալաները չեն ուզում մեզ հետ աշխատել, մահապատճեն են գործադրում մեր ազիտատորների վերաբերմամբ, արգելում են հաշտության մասին խոսել»։

Լուրեր հասան ուսւսական զորքերի դրության մասին Ֆրանսիայում, ուր՝ սպաներին կոմիտեներով փոխարինելու փորձի համար՝ ուսւսական զինվորներին գնդակահարման ելին յենթարկել։

Հոկտեմբերի 20-ին Հանրապետության Խորհրդադում հանդես յեկավ Տերեշչենկոն, վորը կարդաց վոչնչի չպարտավորեցնող մի ճառ։

Բոլշևիկյան Պետրոգրադի Խորհրդի «Բախում ո Սոլդատ» թերթը գրում եր.

«Կառավարության պատասխանը խրամատաներին...»

«Հարցի լուծումն այն է, վոր մենք հավատածենք գեղի դաշնակիցներն ու Տերեշենկոնց Յերբ ե կնքվելու հաշտությունը:—Յերբ դաշնակիցները թույլ տան... Ահա թե ինչպես պատասխանեց կառավարությունը խրամատաներից յեկող հաշտության պահանջին»:

Այդ միջոցներին սկսեց աճել ազգային շարժումն Ռւկրայնայում, Ֆինլանդիայում, Լեհաստանում, Բելոռուսիայում և Նույնիսկ Դունում ու Կուբանում, Վրաստեղ կողակները կազմում եյին կողակային հանրապետություններ:

Կառավարությունը չկարողացավ փոչինչ անել՝ ազատվելու համար Պետրովիադի հեղափոխական կազմակերպություններից և թուղացնելու հեղափոխությունը. կառավարությունը վորոշեց տեղափոխվել Մոսկվա:

Բոլշևիկներն այդ առթիվ հայտարարեցին. «Միւլան ծախվեց գերմանացիներին, ծախվում ե այժմ Պետրովրադը»:

Ռուծյանկոն պատասխանեց այդ հայտարարությանը այսպես. «Վախենում են, վոր յեթե Պետրովրադը կորչի, հեղափոխական կազմակերպությունների կենտրոնը փոչնչացված կլինիք Դրան յես կառավասխանեմ, վոր ուրախ կը

պինեմ, յեթե այդ բոլոր կազմակերպությունները փոչնչանան, վորովինեակ նրանք մուսաստանին միայն գժբախտություն կբերեն»:

Ժողովրդական ցասումի փոթորիկն սակագեց կառավարությանը՝ հրաժարվել. Մոսկվա տեղափոխվելու մտքից:

Խորհուրդների համագումարը կախվել եր Թուոստանի վրա՝ նման փոթորկի ամպին, վորի գեմքին արգեն խաղում են կայծակները:

Ես-երները և մենշևիկները դեմ եյին համագումարին և հեռագրեր եյին ուղարկում, վոր համագումարի համար ընարություններ չը կատարեն, իսկ բոլշևիկներն իրենց հերթին ուժեղ տիբացիա եյին մվում և բացատրում մասսաներին, թե ինչու յե անհրաժեշտ, վոր Խորհուրդները վերցնեն իշխանությունը:

Բոլշևիկյան Պետրովրադի Խորհրդի շտաբը գտնվում եր Սմոլնի ինստիտուտի շենքում. այնտեղ եր գտնվում նաև կենարունական Գործադիր կոմիտեն: Հին սեժիմի որոք Սմոլնում զետեղված եր նշանավոր կիսա-վանսական դրագոցը՝ հատկացված ուռւ մեծամեծների աղջկեցանց, իսկ այժմ շենքը գրավել եյին բանվորական և գինվորակակ կազմակերպությունները:

Ի՞նչ եյին մտադիր անել բոլշևիկները:

Քաղաքում լուրեր եյին պատվում, թե

պատրաստվում ե բանվորների և զինվորների զինված յելույթը:

Բուրժուազիան պահանջում եր կառավարությունից ձերքակալել Պետրոգրադի Խորհուրդը և արգելել համագումարը:

Հոկտեմբերի 28-ին յես խոսեցի կամենկի հետ՝ վոչ բարձրահասակ, շիկավուն կարճ մուրուքով մի մարդու: «Յեթե համագումարը հավաքվի, —ասաց նա, —և յեթե բոլշևիկներն այնտեղ մեծամասնություն կազմեն, —ապա մենք կպահանջենք հանձնել իշխանությունը Խորհրդներին, և ժամանակավոր կառավարությունը հրաժարական կտա»:

Հոկտեմբերի 30-ին Տրոցկին Պետրոգրադի Խորհրդում հայտարարեց, թե բուրժուազիան խոսում ե յենթադրվող զինված ապստամբության մասին այն նպատակով, վորպեսզի «խայտառակի և խափանի Խորհուրդների համագումարը: Պետրոգրադի Խորհրդը, — հայտարարեց նա, —մեզ վոչ մի կարգադրություն չի արել զինված յելույթի վերաբերմամբ»:

Միանգամայն ճիշտ ե, վոր Պետրոգրադի Խորհրդը վոչ մի կարգադրություն չեր արել յելույթի վերաբերմամբ, սակայն բոլշևիկների կենտրոնական կոմիտեն քննում եր ապստամբության հարցը. ամբողջ գիշերը նա նիստ ու-

ներ: Նիստին ներկա եյին կուսակցության բոլոր առաջնորդները և Պետրոգրադի բանվորների ու քաղաքապահ զորքի ներկայացուցիչները: Առաջնորդներից միայն Լենինը և Տրոցկին արտահայտվեցին հոգուտ ապստամբության: Նոյյնիսկ զինվորական աշխատողները զեմ եյին: Հարցը դրվեց քվեարկության, և ապստամբության առաջարկը չանցավ:

Այն ժամանակ յելավ մի հասարակ բանվոր՝ բարկությունից այլայլված գեմքով. «Յես խոսում եմ Պետրոգրադի պրոետարիատի անունից, —ասաց նա կտրուկ կերպով, —մենք ապստամբության կողմն ենք: Թող ձեր ասածը լինի, բայց յես այժմ հայտարարում եմ, վոր յեթե դուք թույլ տաք Խորհրդների վոչնչացումն, ապա ոյլ յեվս մեր յեվ ձեր նանապարհը նույնը չի լինի»:

Զինվորական ներկայացուցիչներից միքանիսը միացան նրան: Յեկ յերը հարցը նորից քվեարկության դրվեց. ապատամբուրյան առաջարկը հաղթանակեց:

Սակայն բոլշևիկների աջ թեր, վորի դեկագարներն եյին Ռյազանովը, կամենկը և Զինովիը, շարունակեց հանդես գալ ընդդեմ զինված ապստամբության:

Հոկտեմբերի 31-ի առավոտյան Լենինը

«Рабочий Путь» թերթում տպագրեց «Նամակը ընկերներին» վերնագրով հոդվածը, ուր ասված եր. «Կամ մենք պետք ե հրաժարվենք մեր՝ «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին» լոգունագից, կամ պետք ե ապատամբենք։ Միջին ճանապարհ չկա»։

Այդ որերին Պետրոգրադը ներկայացնում եր հետաքրքիր պատկեր։ Ֆաբրիկաներում կոմիտեների սենյակները լեփ-լեցուն եյին զենքով։ Կարմիր գվարդիան մարզվում եր։ Զանազան մութ անձնավորություններ պատում եյին կաթի և հացի համար հերթի կանգնած կանանց շուրջը և շշնջում, թե հրեաները թաքցրել են մթերքի պաշարը և թե՝ այն միջոցին, յերբ ժողովուրդը քաղցած ե, Խորհրդի անդամները ճոխ կյանք են վարում։

Սմոլնում բոլոր դարպանների մոտ սրահակ եր կանգնած։ Ներսը աիրում եր ազմուկ։ Վերևում մարդիկ կուտակվել եյին, ինչպես սելյուկաները տակառում, վորակեսզի ներկա լինեն Պետրոգրադի Խորհրդի ազմկոտ նիստերին։

Բուրժուազիան ցնծում եր։ Խաղատներում Շամպայնի գինին հոսում եր գետի պես, դրած գումարները հասնում եյին 20,000 ռուբլու։ Պոռնիկները թանկագին քարերի և մորթիների մեջ կորած՝ վիստում եյին կաֆեներում։

Ամենուրեք միապետական դավեր, գերմանական լրտեսներ, մաքսանենգներ, դավադիբներ, վորոնք ծրագրներ եյին կազմում։

... Իսկ անձրեկի քողով պարուրված քաղաքն ավելի ու ավելի արագ եր ընթանում գեղի... ուր։

## ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Կառավարությունը Պետրոգրադից Մոսկվա տեղափոխելու առաջարկը սոսկալի փոթորիկ առաջցըրեց։ Խորհուրդների ցրումը կալուգայում կողակների ձեռքով, վորոնք աղաղակում եյին՝ ռահա թե ինչպես կվարվենք մենք բոլոր բոլշևիկյան խորհուրդների հետ, վորոնց թվում նաև Մոսկվայի և Պետրոգրադի Խորհուրդների։ ավելի ուժեղացըրեց ժողովրդի զայրույթը։

Հյուսիսային շրջանի Խորհուրդների շրջանային համագումարը վորոշում կայացըրեց, համաձայն վորի ամբողջ իշխանությունը պետք է հանձնվեր Խորհուրդների Համառուսական համակումարին։

«Օբասե Դելօ» թերթի նոյեմբերի 3-ի №-ը դուրս յեկավ հետեւյալ կոչով։

«Քաղաքացիներ, փրկեցնք հայրենիքը։

Յերեկ Ազգային Պաշտպանության Հանձնաժողովի նիստին զինվորական մինիստր գեներալ Վերխովսկին, կողնիլովի անկման ամենամեծ

հանցավորը, առաջարկեց ստորագրել սեպարատ<sup>\*</sup>) հաշտություն՝ դաշնակիցներից անկախ։

Այդ դավաճանությունն եւ մուսաստանի վերաբերմամբ։

Քաղաքացիներ, վոտքի յելեք։

Մուսաստանը ծախում են։

Փրկեցնք նրան։

Սակայն իրապես Վերխովսկին լոկ պնդում եր, թե պետք է սկսել հաշտության բանակցությունները, վորովհետև ուսւական բանակն այլևս չի կարող պատերազմել։

Դա մի չտեսնված խայտառակություն եր։ Վերխովսկին հրաժարական տվագ։ «Օբասե Դելօ» թերթը փակվեց։

Կիրակի, նոյեմբերի 4-ին, վողջ Պետրոգրադում ամենուրեք միտինգներ եյին նշանակած հեղափոխական ուժերը պարզելու նպատակով։

Հանկարծ լուր տարածվեց, թե նույն որը կողակները թափոր են կազմում ի պատիվ 1812 թվականի սրբապատկերի (իկոն), վորի հրաշագործ միջամատության շնորհիվ նապոլեոնը դուրս քավեց Մոսկվայից։

Այդպիսի պայմաններում ամենափոքրիկ

\*) Սեպարատ հաշտությունը այն հաշտությունն է, վոր կնքվում և առանց պատերազմող դաշնակից պետությունների համաձայնության։

Կայծն անգամ կարող եր առաջ բերել քաղաքացիական կրիպտա:

Պետրովստադի Խորհուրդը բաց թողեց մի դիմումն հետեւյալ վերնագրով:

Կողակ յեղբայրներ,

Զեզ, կողակներ, ուզում են հանել մեր՝ բանվորների և դյուզացիների դեմ: Այդ կայենի աշխատանքը կատարում են մեր ընդհանուր թշնամիները՝ ազնվականները, բանկիրները, կալվածատերները, ցարի նախկին սպասարկորները...

Կողակը, զինվորը, նախատին, բանվորը, դյուզացին — հարազատ յեղբայրներ են: Դրանց բոլորին ճնշել ու թալանել ե պատերազմը... Զեզ ասում են, թե Խորհուրդը նոյեմբերի 4-ին մըտագիր ե ապստացմբություն կազմակերպել Սուտեն: Նոյեմբերի 4-ին Խորհուրդը նշանակել ե խաղաղ միտինգներ, ժողովներ, ուր կքննիքն պատերազմի և հաշտության հարցերը: Այդ խաղաղ յեղբայրական միտինգներին մենք հրավիրում ենք նաև ձեզ: Բարի գալուստ, կողակ յեղբայրներ...

Յեղբայրական ձեռք ենք մեկնում ձեզ, կողակներ:

Բանվորական յեվ Զինվորական պատգամավորմարի  
Պետրովստի Խորհուրդը

Թափորը չկայացավ:

Չորանոցներում ե բանվորական թաղամա-

սերում բոլշևիկները քարոզում եյին. «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին». Վորոտում եր Լենինի ձայնը: «Ապստամբություն... մենք այլևս սպասեել չենք կարող»:

Հանրապետության Խորհրդում կերենսկին հայտարարում եր, թե կառավարությունը գիտե բոլշևիկյան նախապատրաստությունների մասին և բավականաչափ ույժ ունի կովելու ամեն մի յելույթի դեմ... Նոյեմբերի 2-ին Խորհուրդների համագումարին յեկավ միայն 14 պատվիրակ: Հետեւյալ որը նրանց թիվը արդեն հարյուրի յեր հասնում, իսկ մյուս որն առավոտյան՝ 175-ի: Նրանցից 103-ը բոլշևիկներ եյին... Հարկավոր եր 400 պատվիրակ ևս, վորպեսզի համագումարը կարելի լիներ որինական համարել և բաց անել այն: Մինչև համագումարի բացումը մնում եր 4 որ:

Այդ որերին յես Տրոցկու մոտ եյի: Նա ասում եր հետեւյալը.

«Ժամանակավոր կառավարությունը միանգամայն անզար ե: Ամբողջ յերկրում, բոլոր աշխատավորների շարքերում նկատելի յե հիամթափություն կառավարության վերաբերմամբ: Կորնիլովի քայլը միակն ե, վորի ոգնությամբ բուրժուազիան կարող ե կառավարել, սակայն նրան պակասում ե զինվորական ույժ: Բանակը մեզ

Հետ եւ Միայն ապստամբությունը, միայն պրոլետարական գերիշխանության հաստատումը կարող ե ավարտել հեղափոխությունը և փրկել ժողովուրդը։ Փորձ արվեց ստեղծել իշխանություն՝ առանց Խորհուրդների, և ստեղծվեց միայն մի անզոր մարմին։ Մենք կստեղծենք Խորհուրդների իշխանություն։ Մենք կառավարությունների գլուխ վրայով կդիմենք բոլոր ժողովուրդներին՝ առաջարկելով զինադադար։ Այս պատերազմի վերջում պըոլետարիատը կվերափոխի Յեվրոպան, վերածելով այն Յեվրոպական Միացյալ Պետությունների։ Այդ պետք է Տեղի ունենա, ինչ ել վոր լինի։ Հակառակ դեպքում՝ իմպերիալիզմը նորից կսկսի իր աշխատանքը... Ֆեղերատիվ հանրապետությունը միայն կարող է ապահովել ամբողջ աշխարհի խաղաղությունը»։

Նա ժպտաց նուրբ, թեթևակի հեղնական ժպտով։

«Սակայն առանց յեվրոպական մասսաների յելույթի՝ այդ նպատակներն անհասանելի յեն ներկայումս։»

Ապստամբությունն սկսվեց պարզ ու բացահայտ կերպով։

Կառավարությունն ուզում էր Պետրոգրադից ուղմանակատ ուղարկել 60.000 զինվոր, ավելի ճիշտ, Պետրոգրադի հեղափոխական քաղաքապահ

դորքը փոխարինել «հավատարիմ» զորքերով՝ կողակներով և հարվածային բատալիոններով։

Զորագնդերը հրաժարվեցին ուղմանակատ գնալ։

Ճիշտ ե, վորոշ չափով ճշմարիտ եր և այն, վոր զինվորները չեյին ուզում թիկունքը փոխել զորաճակատի հետ, սակայն կային շատ ավելի կարեոր հիմքեր, վորոնց պատճառով զինվորները չեյին ուզում թողնել Պետրոգրադը։ Հարյուրավոր պատվիրակներ եյին գալիս ուղմանակատից և ասում։

«Մեզ հարկավոր ե ոգնություն, սակայն մեզ համար ավելի կարեոր է իմանալ, վոր Պետրոգրադն ու հեղափոխությունը լավ են պահպանվում... Ամրապնդեցեք թիկունքը, իսկ մենք կը պահպանենք ուղմանակատը»։

Պետրոգրադի Խորհրդին կից ստեղծված եր Ռազմա-Հեղափոխական Կոմիտե՝ բոլոր ուղմական հարցերը լուծելու համար։

Պետրոգրադի բոլոր զորագնդերի միտինգներում ընդունված եր հետեւյալ բանաձեւ։

«Պետրոգրադի քաղաքապահ զորքն այլ ևս չի ճանաչում ժամանակավոր կառավարությունը։ Մեր կառավարությունը Պետրոգրադի Խորհրդին եւ Մենք կենթարկվենք միայն Պետրոգրադի

• Առօրհրդի այն հրամաններին, վոր հրապարակում են ըստ Ռազմա-Հեղափոխական կոմիտեն»:

Յերեքշաբթի առավոտյան, նոյեմբերի 6-ին, քաղաքը հուզված եր Ռազմա-Հեղափոխական կոմիտեի սառարարած հայտարարության յերեքալու առթիվ՝ Այդ հայտարարության մեջ առված եր.

«Պետրոգրադի բնակչության.

Քաղաքացիներ, հականեղափոխությունը բարձրացրել ե իր հանցավոր պլուխը:

Կորնիլսվի կողմանակիցները զենքի յեն կոչում իրենց ուժերը՝ ցրելու համար Խորհուրդների Համառուսական Համագումարը և Հիմնադիր Ժողովը...

Պետրոգրադի քաղաքապահ զորքը թույլ չի տա վորեւ բանություն կամ անկարգություն։ Բնակչությանն առաջարկում ենք ձերքակալել խուլիսաններին ու սեհարյուրակային զործակալներին և բերել նրանց մոտակա զորանոցները՝ խորհրդային կոմիտարների մոտ։

Քաղաքացիներ, մենք կոչ ենք անում ձեզ պահպանել լիակատար հանգստություն և ինքնատիրապետումն։ Կարգապահության և հեղափոխության զործը գտնվում է կայուն ձեւներում։

Նոյեմբերի 3-ին բոլցիկների առաջնորդներն ունեցան յերկրորդ պատումական փակ նիսար։ Այդ

մասին տեղեկանալով Զալկինդից, յես սպասեցի Սմոլ'նու նախասենյակում, և Վոլոդարսկին դուրս դարձով՝ պատումեց այն, ինչ տեղի յեր ունենում։

Լենինն ասում եր. «Նոյեմբերի 6-ին շատ շուա կլինի գործել. ապստամբության համար հարկավոր ե համաւառական հիմք, իսկ 6-ին գեռ ևս բոլոր պատվիրակները յեկած չեն լինի համագումարի։ Մյուս կողմից՝ նոյեմբերի 8-ը շատ ուշ կլինի գործելու համար. այդ ժամանակ արդեն համագումարը կազմակերպված կլինի, իսկ խոշոր, կազմակերպված ժողովում դժվար ե լինում բնդունել արագ և վճռական միջոցներ։ Մենք պետք ե գործենք 7-ին, համագումարի բացման որը, այնպես վոր կարողանանք ասել համագումարին. «ահա իշխանությունը. ինչպես եք վարդելու նրա հետ»։

Վերին հարկի սենյակներից մեկում նստած եր մի նրբագեմ, յերկար մազերով մարդ, վորը մի ժամանակ ցարական բանակում սպա յեր, այսուհետեւ հեղափոխական և աքսորական, վորն Անտոնով-Ռվենենկո, մաթեմաթիկոս և շախմատիստ։ Նա մեծ խնամքով մշակում եր մայրաքաղաքը գրավելու ծրագիրը։

Կառավարությունը նույնպես պատրաստվում եր. Յունկերական հրետանային գունդը մտել եր Զմեռային պալատը։ Այդտեղ եր դանվում

ժամանակավոր կառավարությունը։ Փողոցում յերեացին կողակիների գիշերաշրջիկ պահակախմբքերը։ Պետրոգրադում, Կրօնշտադտում և Ֆինլանդիայում հայտարարվեց պաշարողական դրություն։

Յերկուշաբթի, նոյեմբերի 5-ին, առավոտյան յես անցա **Մարտինսկի** պալատը, ուր նիստ ուներ Ռուսական Հանրապետության Խորհուրդը։

Կարելինը՝ ձախ ես-եր՝ կարդում եր Լոնդոնի «Թայմ» թերթի առաջնորդող հոգվածը, ուր ասված եր. «բոլշևիզմի դեղը՝ զնդակներն են»։

Կաղեաները բղավում եյին. «Ճիշտ ե»։

Յես գուրա յեկա փողոց. Արևմուտքից փչում եր ձուրտ, խոնավ քամի։ Ազոտ կերպով փայլվում եյին փողոցի լուսաւերները. մարդկային խմբերն անվերջ գալիս եյին ու անցնում. Այդպես ելինում միշտ Պետրոգրադում խոռվությունների նախորյակին։

Քաղաքը ջղայնացած եր, ցնցվում եր ամեն մի սուր ձայնից, սակայն բոլշևիկների մասին ձայն-ծալտուն չկար։ Զինվորները մնում եյին զորանոցներում, բանվորները՝ դործարաններում, ֆաբրիկաներում...

Յես շտապեցի **Սմոլնի**. Տեղեկացա, վոր բոլոր հետախոսները կտրաված են, բայց ֆաբրիկաների և զորանոցների հետ հաղորդակցու-

թյունը պահպանվում է ռազմական հեռախոսի միջոցով։ Կամավորական խմբերը պատրաստ եյին շարժվելու քաղաքի ամենահեռավոր մասերը. Նրանցից մեկն ասաց. «ամեն ինչ պատրաստ է շարժվելու՝ կոճակը սեղմելուն պես»։

Մհա անցավ **Պոդվոյսկին** մի նիհար, միլուքավոր մարդ, վորի ուղեղում ծնվեց ազստամբություն կիրառելու ծրագիրը. անցավ Անտոնով-Ռվենկոն՝ չածլիված, կեկտու ոճիքով, գրեթե հարբած՝ անքուն գիշերներից. Կրիլենկոն՝ միշտ ժպտուն, քառակուսի գեմքով մի զինվոր, — այսպես եյին այդ որերի և գալիք որերի մարդիկ։

Դահլիճում իմ դեմ յելավ բոլշևիկյան առաջնորդներից մեկը. Նա ցույց տվավ ինձ առըրճանակը. «Գործն սկսվել եւ Հակառակորդը զիտե, վոր պետք եւ վերջացնի մեզ հետ իր գործը, կամ թե հասել եւ իր վերջը»։

Յերբ յես մտա այն գահիճը, ուր նիստ ուներ Պետրոգրադի Խորհուրդը, Տրոցկին վերջացնում եր իր ճառը։

«Մեզ հարցըին, — ասում եր նա, — մտադիր ենք մենք ապստամբություն կազմակերպելու։ Յես կարող եմ վորոշակի պատասխան տալ այդ հարցին. Պետրոգրադի Խորհուրդն զգուտե, վոր վերջապես, հասել ե այն մոմենտը, յելք իշխանությունը պետք ե անցնի Խորհուրդների

ձեռքը: Ժամանակավոր կառավարությունը հանդիսանում է խղճուկ և անսովոնական: Նա միայն սպասում է պատմության ցախավելի-շարժմանը, վորպեսզի տեղի տա իսկական ժողովրդական կառավարությանը: Իսկ յեթե նա հանդիս գա մեր դեմ, այն ժամանակ մենք կապտասխանենք հականարձակումով, հարվածին՝ հարվածով, յերկաթին՝ պողպատով»:

Ծափահարությունների միջից նա հայտարարեց, թե ձախ սոցիալիստ-հեղափոխականները համաձայնել են մանել Ռազմու-Հեղափոխական Կոմիտեյի մեջ:

Նոյեմբերի 6-ի առավոտյան յես իմացա, վոր բոլշևիկյան «Սոլդատ» և «Բարօնի Պուտե» թերթերը կառավարությունը փակել են: Լուրեր ելին պտտում, թե կերենսկին դնացել է հանրապետության Խորհուրդը՝ առաջարկելու իր հրաժարականը:

Յես շաապեսի Մարիինսկի պալատը, համելով կերենսկու կրօստ և գրեթե անկապ ճառի վերջին:

«Ուշանով-Լենինը, — ասում եր կորենսկին, — հանդիսանում է պետական հանցավոր, վորը թաքնվում է, և վորին մենք աշխատում ենք գտնել: Այդ պետական հանցավորը պնդում է, թե պետք է անհապաղ դիմել դինված ապատամբության: Նույնպես անհրաժեշտ է նիշել Պետրո-

գրադի Խորհրդի այժմյան նախագահ Բրոնշտեյն-Տրոցկու գործունեությունը: Յես առաջարկում եմ անհապաղ քննություն սկսել և կատարել անհրաժեշտ ձերբակալությունները: Յես հենց նոր ստացա բոլշևիկյան մի պրոլետարացիա:

Ահա այս... և նա կարդաց.

«Բանվորական և Զինվորական Պատգամավորների Պետրովը Խորհրդին վտանգ է սպառնում: Մենք հրամայում ենք զորագնդերին անմիջապես յելույթի պատրաստվել և սպասել նոր հրամանների: Հրամանը չկատարելը կհամարվի դավաճանություն հեղափոխությանը:

Նախագահի փոխարեն՝ Պոլվոյսկի  
Քարտուղար՝ Ավելենկո»:

Ժամանակավոր կառավարությունը յերբեք չի խախտել քաղաքացիների ազատությունը, բայց հիմա մենք ստիպված ենք կորիվ մղել բոլոր այն կուսակցությունների և խմբերի գեմ, վորոնք բարձրացրել են իրենց ձեռքը ոռւս ժողովրդի ազատ կամքի գեմ: Այդ կուսակցություններին ու խըմբերին պետք է վճռականապես վերջ տալ»:

Նա վերջացրեց: Ամբողջ դահլիճը վորոտում եր չարախինդ բացականչություններից:

Նույնիսկ սոցիալիստ-հեղափոխական Գոցը, անգամ նա մեղադրում եր ժամանակավոր կառա-

վարությանը՝ տեղի ունեցած շատ լաների մեջ։ Մենչ էի կի կինստերնացիոնալիստների առաջնորդ Մարտվը հանդես գալով հայտարարեց, թե կերենսկու ճառը դրդում ե քաղաքացիական կովի։

Ընդունվեց մի վորոշում, վորը քննադատում եր կառավարության գործողությունները։ Բայց մենշևիկները և մյուս համաձայնողականներն ըսկըցին հավատացնել կերենսկուն, թե իրենք առհասարակ չեն ուզում այդ բանաձեռվ անվըստահություն հայտնել կառավարությանը... Փողոցով անցնելու ժամանակ յես պատահեցի դիմուրական վաշտերի, վորոնք գրավում եյին մասնավոր ավտոները, անցնում եյին ծովագնացներ, վորոնց գլխարկների վրա զրված եր „Արօրա“, „Զարя Свободы“ («Ազատության արշալույս»)։ Գրանք բարտիական նախատորմի բոլշևիկյան գլխավոր հածանավերի անուններն եյին։

Պետրոգրադի Խորհուրդը ամբողջ գիշեր նիստ ուներ Սմոլնում։ Տաք վեճեր եյին տեղի ունենում բոլշևիկների ու մենշևիկների միջև։ Առավոտյան ժամը 4-ի մոտերքը ներքին դահլիճում յես պատահեցի Զորինին՝ հրացանն ուսին։

«Մենք հանդես յեկանք, — ասաց նա հանգիստ, բայց գոհունակությամբ։ — Մենք ձերբակալեցինք արդարադատության մինիստրի ոգնա-

կանին և գավանության գործերի մինիստրին։ Նրանք արդեն գտնվում են ներքնահարկում։ Մի գորագունդ գնուում ե գրավելու հեռախոսի կայտնը, մյուսը՝ գրավելու հեռագիրը, իսկ յերրորդ գունդը՝ Պետական բանկը։ Կարմիր գվարդիան հանդես ե յեկել»։

Աստիճանների վրա, ցուրտ մթության մեջ, մենք առաջին անդամ տեսանք կարմիր գվարդիան։

Հեռվից թոշում, համնում եյին մեղ արագարագի կրակվող հրացանների ձայները։

Մմոլին՝ վողողված լույսերով՝ աղմկում եր, ինչպիս մեղուների փեթակ։

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Զորեքաբթի՝ նոյեմբեր 7-ին յես վեր կացած շատ ուշ՝ Խոնավ և ցուրտ որ եր։ Պետական Բանկի առաջ կանգնած եյին մի քանի զինվոր՝ սվինավոր հրացաններով։

«Դուք վ՞ր զորաբանակից եք, — հարցրի յես, — կառավարությամբ»։

— Այլևս կառավարություն չկա, — պատասխանեց նրանցից մեկը՝ ժամանակավոր։ Փառք աստծու։ Անա այն բոլորը, ինչ յես կարողացա իմանալ նրանցից։

Ամբողջ քաղաքում փակցրած եյին հայտարարություններ, կոչեր, կոչերը հայտնում եյին, թե ընդդեմ բոլշևիկների կազմված ե «Հասարակական Ազանովության կոմիտե», վորի կազմի մեջ մտել են բոլշևիկներին հակառակ բոլոր միշտյուններն ու կուսակցությունները։

Մարինսկի պալատի մոտ յես լսեցի մի ծո-

վազնացի պատմածը այն մասին, թե ինչպես վերջացավ Ռուսական Հանրապետության Խորհուրդը, վորը նիստ ուներ այդ պալատում լույս նոյեմբեր 7-ի գիշերը։

«Մենք մտանք այստեղ, — ասաց նա, — ի մի քանի պահակ նշանակեցինք բոլոր դաների մոտ։ Յես գնացի հակա-հեղափոխական կորնիլովի մոտ, վոր նստած եր նախագահի աթոռին։

«Այլևս չկա ձեր Խորհուրդը, — ասացի յես, — հիմա առն գնա»։

Լավեց ծիծաղ։

Այդ միջոցին մոտեցավ մի ավատ, այնտեղ նստած եր ձերբակալված համաձայնողական Գոցը։ Այնուհետև մոտեցավ մի ավատոմբիլ ևս, այնտեղ նստած եյին ժամանակավոր կառավարության ձերբակալված անդամները։ Նրանց ուղեկցում եր լատիշ Պետերսը՝ Ռազմա-հեղափոխական կոմիտեյից։

«Յես կարծում եյի, թե դուք ձերբակալել եք այդ բոլոր շենտլմեններին անցյալ գիշեր», — ասացի, ցույց տալով նրանց։

«Ո՞հ, — ասաց նա հիասթափված։ — անշնորհքները բաց եյին թողել մեծ մասին, նախ քան մեր վորոշումը, թե ինչպես վարվենք նրանց հետ»։

Յես քայլերս ուղեցի գեպի Զմեռային պա-

**Լատը:** Այնուեղ զես ևս կային Կերենսկու կառավարության գորքեր։ Պալատում տիրում եր անկարգություն։ Զինվորներն ու սպաները հարբեցողության եյին անձնատուր յեղել։ Կերենսկու անձնական տղյուտանոր, մի շատախոս պատանի, մեզ բացատրեց, «իբրև դադանիք», թէ Կերենսկին գնացել ե ռազմաճակատ, սակայն առզմաճակատին պակասում ե գազոլինը, վոր վերցվում ե անգլիական հիվանդանոցից։

Դուքս դալով Զմեռային պալատից, մենք յերկար ժամանակ թափառում եյինք Պետրոպալի փողոցներով, ուր զես ու դեն եյին վազում զբահապատները՝ ծածանվող կարմիր դրշակներով։ Յերեկոյան մենք գնացինք Սմոլի, ուր կամենեից յես խմացա, վոր Պետրոպալի Խորհուրդը մի բանաձև ե հանել, վորը վողջունում ե պրոլետարիատի իրազործած ապստամբությունը և ժամանակավոր կառավարության տապալումը...

... Գիշեր եր. տասից անց եր 40 լուսե...

Մեր առջե գտնվում եր Խորհուրդների ծփացող ու յեռուն յերկրորդ Համառուսական Համագումարը։

Մոայլ մենշևկ Դանը վեր կացավ և զանգահարեց։

«Յես հայտարարում եմ բացված բանվորա-

կան և զինվորական պատրամավորների Խորհուրդների Յերկրորդ Համառուսական Համագումարի առաջին նիստը»։

Կամենեկը հայտարարեց որակարգը.

1) Իշխանության կազմակերպումն, 2) Պատերազմ և հաշառություն, 3) Հիմնադիր ժողովի հրավիրումը։

Նիստն անցավ չափաղանց վիոթորկալից։ Համագումարի պրեզիդիումի լնալրությունները վերջացան։ Մենշևկիյան հին կենարոնական գործադիր կոմիտեն իջավ ամբիոնից և նրա տեղը գրավեցին՝ Տրոցկին, Կամենեկը, Լունաչարսկին, Կոլոսսայը...

Ամբողջ գանձնար վոտքի յելավ վորոտալից ծափահարություններով։ Վորքան եյին բարձրացել այդ բոլշևիկները, վոր արհամարհված և հաւածված մի աղանդից, վորպիսին նրանք թվում եյին 4 ամիս առաջ, գարձել եյին մեծ Ռուսաստանի ղեկավարները։ Ռուսաստանի, վորն աղբում եր հեղափոխական ապստամբության մակընթացությունը։

Լողովսկին առաջարկեց փոփոխության յենթարկել համագումարի որակարգը։

Բայց հանկարծ լսվեց մի նոր աղմուկ, ավելի խոր, քան ամբոխի աղմուկը, համառ, անհանգստացնող. դա հրետանու մի խուլ պայ-

Թյուն եր: Հասարակությունը հուզված նայեց պատուհանների ուղղությամբ, և ժողովում ախրեց տենդային մթնոլորտ:

Մենշևիկ Մարտովը խոսք պահանջելով՝ խըռպոտ ձայնով ասաց.

«Բաղաքայիական կոիվս սկսվում է: Առաջին հարցը պիտի լինի ստեղծված դրության խաղաղ ճանապարհով լուծելու հարցը: Մենք պետք են պատվիրակություն ընտրենք՝ մյուս սոցիալիստական կուսակցությունների հետ բանակցություններ վարելու համար, վորապեսզի ստեղծենք բոլորի կողմից ճանաչված մի իշխանություն»:

Իսկ այդ ամբողջ ժամանակ անդադար հընչում եր թնթանոթների խլացուցիչ ազմուկը, և պատվիրակները փոխանակում եյին այրող խոսքեր:

Այսպես, իրենանու վորոնի հետ, մթուքյան մեջ, ատելուքյան յել վախի խելագար համարձակության միջից ծնվում եր նոր Խուսաստանը:

Մենշևիկներն ամեն կերպ աշխատում եյին խափանել Խորհուրդների համագումարը, նրանք հանդես եյին բերում իրենց զինվորական պատվիրակներին:

«Բանակը ճիշտ չի համարում Խորհուրդների համագումարի հրավիրումը», — ասաց նրանցից մեկը,

«Յես կոչ եմ անում խելքը չկորցրած բոլոր զինվորներին՝ թողնելայս համագումարը», — ասաց մյուսը:

«Կորնիլովեց, հակահեղափոխական, պրովականատոր», — լսվում եյին աղաղակներ՝ հանդես յեկած մենշևիկների հասցեյին:

Լատիշական հրացանաձիգների կողմից հանդես յեկավ Պետերսոնը:

«Լատիշական հրացանաձիգները, — ասաց նա, — հայտնեցին, թե խոսակցությունների ժամանակն անցել է: Հարկավոր ե գործ, հարկավոր ե վերցնել իշխանությունը: Մենշևիկներն ուզում են հեռանալ, թող հեռանան, բանակը նրանց հետ չե»:

Դահիճը վորոտաց ծափահարություններից՝ Հիսուն պատվիրակ վեր կացան և խոնվելով մոտեցան մուտքին:

Կամեներ զանգահարեց՝ բացականչելով.

«Մնացեք ձեր տեղերում, մենք կշարունակենք մեր աշխատանքը»:

Իսկ Տրոցկին վեր թռչելով տեղից՝ ամբողջապես գունատ, գեմքի խիստ արտահայտությամբ՝ ասաց սառն արհամարանքով.

«Բոլոր այդ այսպես կոչված սցցիալ-համաձայնողականները՝ մենշևիկները, սոցիալիստ - հեղափոխականները և ուրիշները թող հեռանան:

Նրանք սոսկ միայն պատմության տականքներն են, վորոնք կավելվեն ու կթափվեն պատմության աղբակույտը»:

Ոյազանովը բոլշևիկների անունից հայտարարեց.

«Ոյազմա-Հեղափոխական Կոմիտեն պատվիրակություն և ուղարկել Զմեռային պալատը, վորտեղ դարձն եյին մտել յունկերները, բանակցություններ վարելու։ Այդպիսով մենք անում ենք ամեն ինչ՝ արյունահեղությունը կանխելու համար»։

Մենք շատեցինք դուրս գտ այդտեղից։ Սմոլ'նու առաջ դանվող ամբողջ պարտեզը ներկայացնում եր մի ահազին դարաժ յեկող ու զնազող ավտոների, վորոնց ազմուկի միջից լսվում եյին թնդանոթների հատհատ, դանգաղ զարկերը։ Բեռնակիր ափառյով մենք ճանապարհ ընկանք դեպի Զմեռային պալատը»։

Ես և իմ ամերիկյան ընկերները միացանք այն վաշտին, վորը թաքնվել եր պալատի դիմացը դանվող շենքի կամարի տակ։ Բայ տեղ դուրս գալով՝ մենք վազեցինք, խիստ կռացած և համախումբ ու պահպեցինք Ալեքսանդրյան սյունաշարքի պատվանդանի մոտ։

— Զեղնից շնաւ մարդ և սպանված, — հարցրի յես։

— Զգիտեմ, մոտ մի տասնյակ...

Սյան հետեւ մի քանի ըստե մնալուց հետո՝ մի քանի հարյուր մարդուց բազկացած վաշտն ավելի վստահ զգաց և, առանց վորեւե հրամանի, հանկարծ կրկին հարձակում գործեց պալատի վրա, ուր թաքնված եյին յունկերները՝ կերենսկու կողմանկիցները։

Մենք ներս խուժեցինք պալատի աջ կողմի մուտքերից մեկով։ Այստեղից սկսվում եյին բազմաթիվ միջանցքներ և սանդուղքներ։ Այստեղ զետեղված եյին արագին քանակությամբ ինչ-վոր արկղեր։

Զինվորները և կարմիր գվարդիտկանները հրացանների կոթերով սկսեցին ջարդել նրանց յերեսի աախտականները, հանելով արկղերից գորդեր, վարագույրներ, սպիտակեղեն, հախճապակի, սպակի։ Կարմիր գվարդիտկաններից մեկը շրջում եր՝ բրոնզե ժամացույցն ուսին։ Մյուսը գտավ ջայլամի փետուր, վորը խրեց իր գլխարկին։ Թալանը գեռ նոր եր սկսվել, յերբ մեկը բղավեց։

— Ընկերներ, վոչնչի ձեռք միք տա, վոչինչ միք վերցնի։ Դա ժողովրդի սեփականությունն եւ։

Մի քանի ձայներ անհապաղ գոչեցին։ «Կանգնիր. գիր աեղը. վոչնչ մի վերցնի. ժողովրդի սեփականությունն եւ»։ Միջանցքներով անցան և

հեռվում մարեցին «հեղափոխական կարգապահություն... ժողովրդի սեփականություն» բառերը...

Կարգն արագ կերպով վերականգնվեց:

«Մաքրել պալատը, — գոչեց մի կարմիր դըվարդիական. — ընկերներ, ցույց տանք, վոր մենք զողեր ու բանդիտներ չենք»:

Պալատից գուրս յեկողներին խուզարկում ելին: Այն բոլորը, ինչ նրանց սեփականությունը չեր կազմում, խլփում եր, ցուցակագրվում և տարվում մի փոքրիկ սենյակ:

Վերցրած իրերի մեջ կային փոքրիկ արձաններ, թանաքի շեր, մահճակալների ծածկոցներ՝ ցարական նշաններով, մոմակալներ, փոքրիկ նկարներ, վոսկեկոթ սրեր, հագուստ և այլն:

Այնուհետև սկսեցին գուրս բերել յունկերներին: Նրանք սարսափած տեսք ունեյին: Նրանց վրա բղավում ելին՝ մարդասպաններ. հաւկանեղափոխականներ. կորնիլովցիներ: Բայց բռնություն գործ չդրվեց նրանց վերաբերմամբ: Նրանց խուզարկեցին, և գուրս յեկավ, վոր նրանց դրաբանները լիքն են թալանված ամեն տեսակ մանրմունը բաներով:

«Այժմ այլևս դուք դենք չեք բարձրացնի ժողովրդի դեմ» — հարցնում ելին յունկերներին

Թագմա-Հեղափոխական կոմիտեյի ներկայացուցիչները:

«Վհչ», — պատասխանում ելին յունկերները:

Այդ հարցից հետո նրանց բաց ելին թողնում:

«Խնդրեմ, ընկերներ», — հնչեց մի ինչ վորձայն: Դռների մեջ յերեացին մի զինվոր և մի կարմիր գվարդիական: Նրանց հետեւում ելին ժամանակավոր կառավարության անդամներից 6 հոգի: Նրանց մեջ ելին՝ Կիշկինը և Տերեշչենկոն: Ամբոխը փողոցում ուզում եր ինքնադատաստանի յենթարկել նրանց, նույնիսկ կրակում ելին նրանց վրա, բայց ծովագնացներն այնուամենայնիվ կարողացել ելին նրանց վողջ հասցնել Պետրոպավլովսկի բերդը:

Վուավույան ժամը 3-ի մոտերքը մենք թողինք Զմեռային պալատը և ուղեորվեցինք Սմոլ'նի: Ճանապարհին մտանք քաղաքային գուման, ուր նիստ եր գումարել Հասարակական Ապահովության կոմիտեն: Սկսելել պնդում եր, վոր Հասարակական Ապահովության կոմիտեն վերակոչվի Հայրենիքի և Հեղափոխության Փրկության կոմիտե:

Դրանով սկիզբ դրվեց բոլոր հակաբոլիկների ուժերի համախմբմանը:

Մենք հազեվ թե հաջողեցինք գոնել մի կառապան, վորք համաձայնեց մեզ Սմոլ'նի տանել:

«Այնտեղ սատոնամներն են», — ասաց նրանցից մեկը:

Սմունին առաջվա նման ազմկոտ եր և բազմությամբ լի:

Համագումարը նիստ ուներ: Կամենել կարդաց ձերբակալված մինիստրների ցուցակը: Տերեշենկոյի անունը հարուցեց ծափահարությունների վորոտ:

Սոցիալիստ և հեղափոխականները պնդում եյին, վոր անհաղաղ բաց թողնեն սոցիալիստ մինիստրներին:

Հանգես յեկավ Տրոցկին:

«Այդ ընկերները բռնված են այն միջոցին, յերբ նրանք դավադրություն եյին կազմում՝ ցըելու Խորհուրդները: Կամ արդյոք վորոն հիմք նրանց հետ մարդագարի վարվելու: Հուլիսյան որերից հետո նրանք այնքան ել հաշվի չեյին առնում մեզ: Այժմ, յերբ պաշտպանողականներն ու վախկուաները հեռացել են, և հեղափոխության պաշտպանության ամբողջ խորհրդը մեր ուսերին ե զրված, առավել ևս անհրաժեշտ ե աշխատել, աշխատել և աշխատել. Մենք վճռել ենք մեռնել ավելի շուտ, քան թե նահանջել»:

Նրանից հետո հանգես յեկավ Ցարսկոյե Սելյից հևալով հասած մի կոմիսար՝ ամբողջապես

ցեխի մեջ կորած՝ ճանապարհից նոր վերադարձած լինելու պատճառով:

«Յարսկոյե Սելյից գարնիգոնը կանդնած ե Պետրովագի գոների մոտ, պատրաստ՝ պաշտպանելու Խորհուրդը, Ռազմա-Հեղափոխական Կոմիտեն»:

Նրա յելույթն ընդունվեց վորոտալից ծափահարություններով:

Մենշևիկները նորից պահանջեցին ընտրել մի հանձնաժողով՝ վորոնելու համար խաղաղ յելք ստեղծված զբությունից:

«Զկա վոչ մի խաղաղ յելք», — վորոտաց ամրություն:

«Հաղթություն, անա հարցի միակ լուծումը»:

Համագումարը տապալեց մենշևիկների առաջարկությունը: Մենշևիկների մնացորդներն սկսեցին գուրս գալ նիստի դահլիճից՝ հավաքվածների հեգնական բացագանչությունների տակ: Այնուհետև համագումարի կողմից ընդունվեց մի կոչուղղված ամբողջ Ռուսաստանի բանվորներին, զինվորներին և գյուղացիներին:

«Բանվորներին, զինվորներին և գյուղացիներին.

Բանվորական և Զինվորական Պատգամավորների Խորհուրդների Յերկրորդ Համառուսական համագումարը բացվեց... Հենվելով Պետրո-

կառավարությունը և զբարի Խորհուրդների համագումարը արդեն կատարված պետական հեղաշրջման առջև Այժմ պետք եր տիրել ամբողջ մեծ Ռուսաստանին և այնուհետև ամբողջ աշխարհին։ Կհետեւ՝ արդյոք Ռուսաստանը Պետրոգրադին և կենաց վուտքի։ Իսկ աշխարհիր։ Ի՞նչ է պատրաստում նա։ Այստեղ արձագանք կտանի արդյոք ժողովրդական մասսաները, և կբարձրանան համաշխարհային կարմիր ալիքը։

Թեպետ արդեն առավոտյան ժամը 6-ն եր, քաղաքը դեռ պարուրված եր գիշերվա խավար և ցուրտ ծածկույթով։ Միայն թույլ, անհամարձակ, գունատ լույսն եր վախկոտ դեղերում լուս փողոցներով, սախալելով դժգուննելու պահակային խարույկներին։ Սոսկալի առավոտվա ստվերը մոխրագույն փոշիյով բարձրանում եր Ռուսաստանի վրա։

Գ. 5

## ԱՌԱՋ ԱՆՎԱԽ

Իշխանությունը Խորհուրդների ձեռքն անցնելու հենց առաջին որերից Փրկության կոմիտեն կատաղի պայքար եր մզում բոլշևիկների, գետիմ։ Խորհուրդների Համառուսական Համագումարի՝ զորաբանակին ուղղած կոչի առթիվ, վորտեղ հրահանգվում եր «ձեռք առնել բոլոր միջոցները—անհապաղ ձերբակալելու կերենսկուն և բերելու նրան Պետրոգրադ», Փրկության կոմիտեն բաց թողեց հետեւյալ կոչը։

«Փրկության կոմիտեն,—ասված եր այնտեղ,—հրամայում ե բոլոր քաղաքացիներին, վորնրանք հրաժարվեն ընդունել բռնության իշխանությունը։ Միք հպատակի նրա հրամաններին։ Վոտքի յելեք՝ պաշտպանելու հայրենիքն ու հեղափոխությունը։ Պաշտպանեցնք Փրկության կոմիտեն»։

Ինտելիգենցիան և բուրժուազիան Փրկու-

թյան կոմիտեի կողմն եյին ու ամեն կերպ վեասում եյին Խորհրդային իշխանության:

«Ի՞նչպես, այդ բոլշևիկներն ուզում են թելադրել ինտելիցիային: Մենք նրանց ցույց կտանք», — ասում եյին նրանք:

Անմիտթար լուրեր հասան այն մասին, թե Կորնիլովը փախել է կալանքից, այն մասին ևս, թե գեներալ Կալեգինը զալիս է Պետրոգրադի վրա: Բուրժուազիան ցնծում եր և անհամբեր սպասում բոլշևիկների մոտալուտ անկման: Այս բոլորը վախեցնում եր և քայլայիչ ազգեցություն ունենում բոլշևիկյան կուսակցության վորշ մասի վրա ու ստիպում նրան հակվել զիջումներ անելու մտքի կողմը, վորչափով խոսքը վերաբերում եր սոցիալիստական միացյալ կապարություն ստեղծելուն:

«Մենք չենք կարող դիմանալ, — բացականչում եյին նրանք. — հակառակորդի ույժը չափազանց մեծ է, մենք մարդիկ չունենք, մենք մենակ կմնանք, իսկ մենակ՝ մենք չենք կարող զլուխ հանել, և ամեն ինչ կկորչի»:

Այդպես եյին ապացուցում կամեներ, Ոյազանովը և ուրիշները: Բայց կենքն ու Տրոցկին անսասան եյին, ինչպես ժայռ:

Նվաճված իշխանության բախտի հարցը վը ճռվում եր Սմոլնում Խորհուրդների շարունակ-

